ԱՇՈՏ ՊԵՏՐՈՍԵԱՆ
Փիլիսոփայական գիտութիւնների թեկնածու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ
Խորհուրդ եւ հաւատք

«Ո՞վ կարող է գիտենալ Քո խորհուրդները, եթէ Դու իմաստութիւն չտաս եւ Քո Սուրբ Հոգին չառաքես Քո բարձունքներից»:
(Իմաստ. Թ. 17-18)

Գրիգոր Նարեկացին աստուածաբան եւ մարդագէտ լինելով, նաեւ **Աստուածատես** Սուրբ է, ով մարգարէների եւ առաքեալների հանգոյն անմիջականօրէն հաղորդակից է եղել Աստծուն եւ Աստուածային իրողութիւններին, ներշնչուել է բուն Աղբիւրից, իր անձի մէջ կուտակել ճշմարտութեան լոյսը եւ այն տարասփռել ամբողջ աշխարհում: Քրիստոնեայի դիրքերից նա շատ իւրայատուկ մօտեցում է ցուցաբերում **հաւատքի եւ շնորհատրութեան** համապատասխանութեան խնդրին: Մարդուն միշտ տրւում է իր հաւատքի չափով: Այս պարագային առկայ է Սուրբ Գրիգորի հաւատքի մեծութիւնն ու զօրութիւնը, որոնց շնորհիւ նա աննախադէպ հոգեւոր սխրանքներ է կատարում՝ փորձելով սահմանել անսահմանելին, բնութագրել Աստծուն, մի բան, որ մինչ նա կատարուել է գրեթէ ներզգայական մակարդակով, որովհետեւ Աստծուն ինչոր կերպ պատկերացնողն ընկնում է հոգեզմայլանքի մէջ եւ անկարող է լինում իր զգացածը հաղորդելու: Մինչդեռ Աստուծոյ բնորոշումները սփռեալ տարածումով առկայ են ամբողջ Մատեանի մէջ: Ամեն անգամ նոր բնութագրութիւններ են ի յայտ գալիս եւ Աստուած, Նարեկացու շնորհիւ, մարդուն ներկայանում է մի նոր տեսանկիւնով: Աստուծոյ այդ բնութագրական յատկանիշներից որեւէ մէկը երկրորդ անգամ չի կրկնւում: Նոյնիսկ Աստուածաշնչից արուած նրա յղումները իւրակերպուած են եւ ի յայտ են գալիս՝ ներդաշնակելով նրա մտքին եւ գոյացնելով նոր մտապատկեր: Նարեկացու աշխարհըմբռնման հիմքը եւ ելակէտը, բնականաբար, Աստուածաշունչն է: Սակայն Սուրբգրական յղումները Նարեկացու լեզուամտածողութեան մէջ **իւրակերպուելով**՝ ենթարկւում են նրա մտակառոյցի օրէնքներին:

Ինչպէս միակն ու անկրկնելի է Նարեկն իբրեւ մշակոյթի համամարդկային, մեծազօր արտայայտութիւն, այնպէս էլ անկրկնելի են մնում Նարեկացու բոլոր այն արտայայտութիւնները, որոնք վերաբերում են Աստծուն կամ բացայայտում են մարդկային բնոյթն ու հոգեբանութիւնը: Թէեւ դրանք բոլոր ԲԱՆերի մէջ ծառայում են Նարեկացու մտադիր խնդրի բացայայտմանը, սակայն նաեւ համազումարւում են եւ գոյաւորում Սուրբ Գրիգորի աստուածաբանական ըմբռնումի ամբողջականութիւնը: Այս ըմբռնումը վերաբերում է Աստուածային Սուրբ Երրորդութեանը, առաւելապէս Յիսուս Քրիստոսին, Աստուծոյ անբաւ կարողութիւններին, նրա աներեւակայելի մարդասիրութեանը, երկայնմտութեանը, ամենահաս բարեգթութեանը, անսահման մեծազօ-

րութեանը… Ոչ միայն Աստուծոյ, այլեւ Աստուածային մի որեւէ հրաշալի իրողութեան բովանդակութիւն Նարեկացին համարում է անսպառ, մինչեւ վերջ անբացայայտելի ոչ միայն մարդկանց, այլեւ Աստուծոյ հետ ընդհանրութիւն եւ մտերմութիւն ունեցող երկնայինների համար: Սակայն հրաշալին այն է, որ Նարեկի ԲԱՆերը հենց այդ իրողութիւնների լուսաբանումներն են, որոնք ամեն անգամ հիմնաւորում են Նարեկացու աղերսանքն առ Աստուած, որ դրանք ոչ միայն, եւ ոչ այնքան, նրա ենթակայական ցանկութիւններն են, այլեւ առարկայական անհրաժեշտութիւնից բխած համամարդկային խնդիրներ, որոնք լուծւում են Նարեկացու հանճարով եւ Աստուածային բարեհաճ կամքով, Նրա ողորմածութեամբ: Նարեկացին յաջողում է ամեն անգամ բացայայտել աներեւակայելին, նա մեր՝ մարդկանց համար նորանոր բացայայտումներ է անում եւ մարդու վերաբերմամբ ի յայտ է գալիս Աստուծոյ ամենագթութիւնը եւ կատարւում են Նարեկացու մտադիր ցանկութիւնները, որոնք սպեղանիներ են մարդկանց համար, վարքի չափանիշներ, առաջնորդական կանոններ, բայց ոչ թէ գիտական խստորոշ սահմանումներով կամ դոգմատիկ եղանակով, այլ մարդկային հոգեբանութեան գունագեղ հենքի վրայ: Նարեկի եւ Նարեկացու միջոցով մարդկութիւնը կապւում է Աստուծոյ հետ եւ այդ կապը վերածւում է կենդանի հաղորդականութեան: Հենց այդ ի միտ առնելով՝ Նարեկացին Նարեկը համարում է կենդանի պատարագ, նուիրատուութիւն Աստծուն, եւ, իրօք, այդ պատարագը, կամ հին արտայայտութեամբ՝ մատաղն ինքը Սուրբ Գրիգորն է, որ պատարագւում է՝ ամբողջ աշխարհի համար՝ նմանուելով Փրկչի ամենահրաշ եւ յարատեւ պատարագումին:

Նարեկացու բնորոշումներն այնքան յստակ են, որ Աստծուն վերաբերողները կարելի է առանձնացնել եւ դնել մէկը միւսի առընթերութեամբ, առաջին ԲԱՆից մինչեւ վերջինը եւ կ'ստացուի մի նոր ամբողջութիւն, սակայն մենք խախտած կը լինենք բուն Նարեկի կառոյցը, որովհետեւ Սուրբ Գրիգորի համակարգի մէջ ամեն ԲԱՆ հեղինակային մի մտայղացում է, մէկ խնդիր, մէկ լուծում, շաղկապեալ մէկ ամբողջութիւն: Այս արտայայտութիւններն այնքան առինքնող են, որ սրանցից իւրաքանչիւրը կարող է դառնալ տեւական մտասեւեռման առարկայ: Այսպէս. «*Խնդրում եմ հոգիս՝ Երկնային Արքայութեանդ կայսերական պատկերը անարատ պահեա*» ասոյթի իմաստագիտութեան վրայ կարելի է կենտրոնանալ ամբողջ կեանքի ընթացքին եւ չհասնել նրա խորութեան ըմբռնումին: Նոյնը վերաբերում է բազում այլ ասոյթների եւ արտայայտութիւնների, որոնք կարող են լինել երկբառ, եռաբառ եւ բազմաբառ: Ուսումնասիրողները շատ են խօսել Նարեկացու նորաստեղծ բառերի մասին, սակայն գրեթէ ուշադրութիւն չի դարձուել խօսքային արտայայտութիւնների վրայ: Նարեկացու լեզուն հնարաւորութիւն է տալիս միտքը, խօսքը կառուցել ամենաբազմազան կերպով, սակայն Նարեկացու համար առաւել բնորոշ մտայանգման ձեւը **մակածութիւնն** է (ինդուկցիա), որն առաւելաբար կիրառւում է բնագիտութեան մէջ. բազմակի նախադրեալներից կատարւում է եզրայանգում: Մաթեմատիկայի մէջ կարճւում է նախադրեալների բազմաքանակութիւնը եւ կիրառւում է մի տառանիշ, որը ցոյց է տալիս նախադրեալների թուի անվերջութիւնը կամ անորոշութիւնը: Սովորական լեզուամտածողութեան մէջ նախադրեալների կամ օրինակների անվերջ կամ անորոշ շարքը կարճւում է *եւ այլն, եւ ուրիշներ*-ով: Նարեկացին իր ամբողջ ստեղծագործութեան մէջ *եւ այլն* բառը չի գործածում, քանզի նա մտքի լուսաբանումը հասցում է մինչեւ վերջ, լուսաւորում է առարկան բոլոր կողմերից: Նարեկի մէջ, թւում է, գլխաւոր եւ երկրորդական հարցեր

չկան, նման այն վերաբերմունքին, որով Սուրբը մօտենում է մարդու մեղքերին, արատներին, թերութիւններին: Նա ուրիշների անտեսածներն ու արհամարհածներն ի յայտ է բերում եւ բացայայտում դրանց նշանակութիւնը, զգուշացնելով, որ հոգեկան առաջընթացի ժամանակ որեւէ պայմանով կարելի չէ անտեսել երկրորդական թուացող թերութիւնները, որոնց համարժէք լինում են հիւանդութիւններ, նեղութիւններ ու հատուցումներ (տե՛ս Բան Հ.ա):

Վերադառնալով Նարեկացու արտայայտութիւններին կամ բնութագրական դատողութիւններին, ասենք, որ դրանցից ամեն մէկի միջոցով մարդ կապւում է Աստուծոյ հետ, զգում Նրա զօրութիւնը, եւ զմայլւում Նրանով: Օրինակ. «*Տէր Աստուած զթութեան, փրկութեան եւ ողորմութեան, քաւութեան եւ նորոգութեան, բժշկութեան եւ առողջութեան, կենդանութեան եւ անմահութեան…* Հիասքանչ է այս դիմելաձեւը, եւ այս բացայայտումներից յետոյ Նարեկացու աղերսանքներն են, ինչպէս օրինակ. «*Յիշե՛ա զիս, երբ գայցես Քո աստուածային զօրութեամբ…*»: Եւ այդպէս էլ մնացեալ վիճակներին: Նարեկացին ԲԱՆերը գրել է յաւելուածների կարգաւ եւ կարելի է հարց տալ, թէ այդ յաւելուածները կը շարունակուէի՞ն արդէօք, եթէ Նարեկացին աւելի երկար ապրէր: Մենք հակուած ենք այն համոզման, որ Նարեկ աղօթամատեանը հասած է իր աւարտուն լրումին եւ ամբողջական երկ է եւ նրա ըմբռնումը եւ յատկապէս անձի անհատական կենսընթացքի իրականացումն ըստ այդ ըմբռնումի համընթաց է, համարժէք է եւ համագոյակից մարդկային փրկագործութեանը: Նարեկացին հաւատում է եւ յոյս ունի, որ ինքը փրկուելու է Աստուծոյ ողորմածութեամբ: Նոյն համոզմունքը կարող է ունենալ որեւէ մէկը, եթէ նա յամարձակի ինքն իրեն անուանել նարեկագէտ, իւրացնի Նարեկը ոչ միայն որպէս միտք, այլեւ որպէս աղօթք, այսինքն վերապրի իրականութիւնը, Աստծուն զգայնապէս, ինչպէս զգում է ինքը՝ Սուրբը: Տարրական նոյնութեան մասին չէ խօսքը, այլ ճանապարհի, որն ամեն ոք կարող է անցնել ըստ իր անձնական առանձնայատկութեան: Ամենքի ճանապարհն էլ միեւնոյնն է, քանզի որքան էլ իւրայատուկ ստեղծագործութիւն է Նարեկը, այն Քրիստոնէութեան ճանապարհ է, համապատկերումն է ճանապարհի՝ Յիսուս Քրիստոսով, Ում մէջ մենք արդէն մտել ենք եւ ընթացք ենք ապրում Իրենով:

Նարեկացի-բանաստեղծի արտայայտաձեւերը հոգեբանօրէն այնքան հաւաստի են եւ այնքան անձնականացուած, որ հաւատում ես, թէ այս ամենը ապրել է մէկ մարդ, այս բոլոր մեղքերն իրենն են: Ո՞վ կարող է այդքան հանճարեղ կերպով արտայայտել մարդու ներաշխարհը, *մարդկութեան պատմական հոգեբանութիւնը*, մարդու էութիւնն առհասարակ: Եւ այս ամենը բանաստեղծական ձեւի միջոցով, արուեստով, որպէսզի մարդու ըմբռնող միտքը չհոգնի գիտական քննախօսութեան միօրինակ լեզուամտածողութիւնից: Նարեկացին դրսեւորել է այդ գերբնականութիւնը՝ թափանցել է մարդկային էութեան մէջ, իր հոգում վերապրել է մարդկութեան հանրայնօրէն գործած բոլոր մեղքերը եւ բոլորի համար զղջացել է, ապաշխարել, լացել: Ի՞նչ սիրտ կարող էր դիմանալ եւ ինչպիսի կամք պիտի լինէր՝ զերծ մնալու յուսահատութիւնից եւ մարդատեացութիւնից: Չէ՞ որ ինքն է գրել, այսինքն ապրել. «*Եւ յանցանքներիս յիշողութեան սաստկութիւնից յաւէտ յուսահատեցի». (ԻԳ, 26):*

Նարեկացին Միջնադարի մտածող է եւ, արտայայտ աշխարհը Նարեկի մէջ, բնականաբար, պիտի հանդէս գար իբրեւ անարտայայտի համապատասխան **խորհրդա-**

նիշ: Այս իրողութիւնը յաւելեալ իմաստներ է հաղորդում երեւութական աշխարհին եւ խորհրդագիտական երկին հաղորդուողը պիտի կարողանայ կարդալ առարկայի կրկնակ կամ բազմակի իմաստները: Երկնայինի վերաբերեալ մարդ ի զօրու է պատկերացում կազմելու եւ դատողութիւն անելու միայն երկրայինի միջոցով, որը հենց **անալոգիան է, համանմանութիւնը:** Առարկաները աշխարհում բացի իրենց սովորական գործածական դերակատարութեանը, ունեն լրացուցիչ նշանակային իմաստ, դառնում են սիմուոլ երկնայինի համար: Այդպէս ստեղծուել է խորհրդաբանութիւնը՝ սիմուոլը եւ սիմուոլիկան, որպէս իմացութեան եւ վերաբերմունքի յատուկ եղանակ: Խաչը, Աւետարանը, Եկեղեցին եւ Եկեղեցու հետ կապուած բոլոր իրողութիւնները ունեն իրենց խորհուրդները:

Խորհուրդը երկնքի կամ ոգու գաղտնիքների պահարանն է: Խորհրդագիտութիւնը խորհուրդաւոր իրողութեանց խորքային կապերի, ծածկուած գաղտնիքների, մտքի խտացումների, բախտորոշ ակնկալութիւնների յայտնութեան, յաւիտենական ճշմարտութիւնների բացայայտման տեսութիւնն է: Խորհուրդները բացայայտւում են հազուադէպ եւ ոչ լրիւութեամբ: Դրանց յայտնաբերումը նախապատրաստւում է ճգնութեամբ եւ սրբակենցաղավարութեամբ, հաւատքով ընդունւում է սրբերի, մարգարէների եւ իմաստունների կողմից եւ հաղորդւում աշխարհին Սուրբ Գրքերի միջոցով, առաջ բերելով անջնջելի, հոգեցունց տպաւորութիւն եւ էական փոփոխութիւններ մարդկային կեանքում: Հոգեկան առանձնակի վիճակում բարձր իրողութիւնների հետ հաղորդուելու միջոցով խորհրդի բացման եւ բացայայտման շատ դէպքեր եւ վիճակներ նկարագրուած են նախաքրիստոնեական, այդ թւում նաեւ հին յոյն իմաստասէրների երկերում, որոնք մարդու միտքը, զգացմունքն ու կամքը երկնաձիգ ուժով քաշում են վերեւ: Հետաքրքրական է, որ Պլատոնը խորհուրդներին առանձին անուն է տալիս՝ **գաղափար**, վերջինիս օժտելով մարդկային մտքից անկախ գոյութիւն, յատկացնելով առանձին գոյատեղ՝ վերաստեղային ոլորտ, համարելով դրանց յաւիտենական: Նրանք ինքնաբաւ են եւ նախասկզբնական, որոնց համապատասխան երկրի վրայ կան առարկաներ, իրեր, իրողութիւններ: Եւ այդ առարկաները պարզապէս յիշեցնում, վերյուշ են արթնացնում այն գաղափարների մասին, որոնց առնչուել է մարդ նախկինում, իր անդրաշխարհային գոյութեան ընթացքին: Այդ վերյուշը հոգեզմայլութիւն եւ յուզական արտակարգ վիճակ է ստեղծում մարդու մէջ: Արթուր Շոպենհաուէրը գաղափարն անուանում է պատկերացում եւ աշխարհը, իրականութիւնը դիտում որպէս կամք եւ պատկերացում:

Գաղափար-խորհուրդները ո՛չ թէ ռացիոնալ, տրամաբանական ճանապարհով են ընկալւում, իմացւում, ինչպէս ասենք՝ սովորական, առօրեական փաստական իրողութիւնները, այլ ընբռնւում են իբրեւ հրաշք: Դրանք համակում են մարդուն՝ նրա մէջ առաջ բերելով նոր ինքնազգացողութիւն, նոր մտքեր, հոգու լուսաւորութիւն: Մարդը փոխւում է հոգեբանօրէն, կարելի է ասել հոգեփոխւում է եւ «բացւում» է նրան «իսկական աշխարհը» եւ նրա մէջ ձգտում է առաջանում դէպի երկինք: Նա լոկ կենդանի էակ լինելու վիճակից վերաճում եւ դառնում է մարդ՝ բառի բուն իմաստով, հոգի ունեցող կամ հոգեւոր էակ: Լինելով հողեղէն եւ ապրելով երկրի վրայ, նա միաժամանակ դառնում է երկնային կամ «երկնքից իջած» կամ հոգով երկինք տեղափոխուած: Այդ «տեղափոխութիւն»ը պիտի չհասկանալ տարածզօրէն, աշխարհագրօրէն, զի հոգու նկատմամբ կիրառելի չեն ժամանակա-տարածական, առարկայական, պատ-

ճառա-հետեւանքային ստորոգելիները, բնութագրերը: Թէեւ խորհուրդները մինչեւ վերջ չեն իմացւում, սակայն նրանք յաճախ անարտայայտ մակարդակով գոյանում են հոգու նախագիտակցական ոլորտում եւ յուզական վիճակ են առաջացնում եւ խօսքային յստակ բանաձեւումով հաղորդելի չեն լինում: Դրանց յստակ բանաձեւումները տրւում են միայն սրբերին եւ նրանք մարգարէանում եւ խորագիտօրէն լուսաբանում են այն ամենը, ինչ առհասարակ ծածկուած է «սովորական» մարդկանց աչքից: Միայն սրբերն են կարողանում խօսել խորհուրդների մասին, այն էլ համապատասխան վիճակների, որոշ պայմանների առկայութեամբ: Կարելի է ասել, որ նրանց բերանով Սուրբ Հոգին է խօսում: Խորհուրդների ներքին իմաստները երբեմն տրւում են տեսիլքների միջոցով, որոնք անայլայլելի տպաւորւում են, յստակ պատկերացւում եւ հաղորդւում վարդապետական խօսքով եւ առակներով, այսինքն դառնում են միանգամայն հաղորդելի:

Խորհուրդները չբացայայտուելով մինչեւ վերջ, ենթակայ են կերպաւորման, ունեն դրսեւորուելու, առարկայանալու, հաղորդուելու այլ ձեւերի վերածուելու յատկութիւններ: Նրանք ստանում են խորհրդակիր առարկաների, երեւոյթների եւ իրողութեանց կերպարանք: Այդպիսիք են եկեղեցին եւ եկեղեցու հետ կապուած բոլոր իրողութիւնները: Եկեղեցին, կարելի է ասել, երկրի Երկինքն է:

Խորհրդաբանութեան միջոցով բացայայտւում են երկնային, թաքնուած իրողութիւնները, ներքին մարդը, դէպի Աստուած տանող ճանապարհները:

Խորհուրդների գիտութիւնը կամ խորհրդաբանութիւնը ծէսերի, բարոյակարգի եւ վարդապետութեան հետ միասին կազմում են կրօնական կեանքի հիմնական բովանդակութիւնը: Խորհրդագիտութեան ամենանշանաւոր դրսեւորումներն են Հին եւ Նոր Կտակարանային Գրքերը, Սուրբ Հայրերի ուսմունքը, Սուրբ Գրիգոր Նարեկացու Մատեանը: Խորհրդանշական իրողութիւններին առնչւում ենք նաեւ Սուրբ Գրական երկերի մէջ: Աստուածային խորհուրդները բացելու համար **Յիսուս** բերում է առակներ, որոնց միջոցով հասկանալի են դառնում խորհուրդները: Դրանց իմաստները բացայայտւում են, ի հարկէ, Տիրոջ մեկնաբանութիւնից յետոյ: Յատկապէս հասարակ ժողովրդի համար է արդիւնաւոր լուսաբանման այդ եղանակը, որովհետեւ նրանք չեն ստանում համակարգուած կրթութիւն: Անկախ այս հանգամանքից՝ Աստծոյ Որդին ազդարարում է Աստուածային ճշմարտութիւնների անյուսալի փակուածութիւնը նրանց համար, ովքեր իրենց գործնական կեանքում եւ հաւատքով ու աշխարհայացքով հեռացած են արդարութիւնից: Նրանք տեսնելով պիտի չտեսնեն, որովհետեւ կուրացած են հոգով:

Գրեթէ բոլոր նարեկագէտներն են ուշադրութիւն դարձրել Նարեկի **խորհրդագիտական** բնոյթի վրայ:

Անչափելի խոր եւ կարեւոր են արտայայտութեանց, Բաների, տեքստերի եւ համատեքստի իմաստները: Հնուց ի վեր փորձել են մեկնել այդ արտայայտութիւնները, եզրերը եւ առաջ է եկել նարեկագիտութիւնը, հռչակուել են մեկնիչները (Լամբրոնացուց մինչեւ Նալեան, Աւետիքեան) գրականագէտները, իմաստասէրները: Արտայայտել են մէկը միւսից հմայիչ, մէկը միւսից վեհապանծ խօսքեր եւ էլի կասուեն: Սակայն եթէ հնարաւոր լինի սպառիչ խօսք ասել կամ լիակատար մեկնել Աւետարանները, հնարաւոր կը լինի դա անել նաեւ Նարեկի առումով: Ամեն ոք թէ՛ մէկի եւ թէ՛

միւսների մէջ կը գտնի նորանոր իմաստներ, նորանոր հորիզոններ կը բացուեն նրա առջեւ եւ հոգին մէկ օր թէթեւացած երկրաքարշ հոգսերի բեռից, ազատ կը սաւառնի ոգու թագաւորութեան անդաստաններում:

Նարեկի ԲԱՆԵՐԻ կարգաւոր շարադասութիւնը համապատասխանում է մարդկային ողբերգութեան եւ այն յաղթահարելու հոգեբանական ընթացքին: **Գաբրիէլ Աւետիքեանը** «Ձայն հառաչանաց»-ը, որով սկսւում է Նարեկը, մեկնաբանում է այսպէս. *«Աղօթքների սկզբից անհրաժեշտ է նկատել, թէ ինչպէս է սուրբ վարդապետն ըստ հոգեւոր փոփոխման ներգործութեան կարգաւորում ԲԱՆԵՐը: Քանզի երբ մարդ սկսում է առանձնանալ մարմնական զգացումներից, եւ հոգով սրտով ներամփոփւում է, Աստուծոյ շնորհների լոյսով նախ եւ առաջ տեսնում է գարշութիւնն իր մեղքերի, ու ապերախտութիւնն առ Աստուած: Ապա յիշում է ահեղ դատաստանն Աստուծոյ, որի նախազգուշացումը Սուրբ Գրքերի մէջն է եւ նրա մէջ արթնանում է դատապարտութեան երկիւղը, եւ երկիւղից՝ սաստիկ տրտմութիւն, եւ տրտմութիւնից՝ հառաչանք ու ողբ, որի պատճառով երբ խօսել է սկսում, բնականաբար նախ արտասուախառն հառաչանք է ծնւում, եւ ապա երկիւղը տրտմութիւն է պատճառում: Ահա այսպիսի ներգործութիւնը Սուրբ վարդապետը* առաջին *ԲԱՆի մէջ է արտայայտում: Այնուհետեւ տրտմութիւնից եւ երկիւղից՝ սկսում է մարդ զայրանալ իր անձի վրայ, կշտամբել իր հեղգութիւնը, անմտութիւնը եւ տկարութիւնը՝ եւ ի սպառ հիասթափուելով իր անձից, ապաստանում է Աստուծուն՝ հայցելով Նրանից նորոգութիւն իր հոգուն: Սրանք էլ Սուրբ վարդապետը ի յայտ է բերում* երկրորդ *ԲԱՆի մէջ: Իսկ երբ այսպէս քաջալերւում է հոգին թողութեան յոյսով, փարատելով տրտմութիւնը եւ զուարթանալով այնուհետեւ Աստուծոյ բարութեան եւ գթութեան խոկումից, հառաչական ձայնի փոխարէն՝ Աստուծուն է փառաբանում անյագաբար: Եւ այս ներգործութիւնն ի յայտ է բերում Սուրբ վարդապետը* երրորդ *ԲԱՆի մէջ: Իղձերի այսպիսի կարգաւորութիւն է նախատեսում աղօթքների ընթացքում, մի տեղ մաքրողական ներգործութիւն դնելով, այլ տեղ՝ լուսաւորութիւն, եւ ուրիշ տեղ՝ միասնութիւն Աստուծոյ հետ»:*

Սա հոգեբանական խոր վերլուծութիւն է, հաւատացեալի հոգու **տեսութիւն,** որ մակաբերում է մարդկային միտքը Նարեկից՝ երկի ուշադիր ընթերցման միջոցով:

Նարեկացին Մատեանի մէջ լուսաբանել է մարդու եւ մարդկային աշխարհի խորհուրդները, խորապատկերել է մարդկային ներաշխարհը կամ ներքին մարդուն, նաեւ մարդու կապերն աշխարհի հետ, այլեւ Աստծոյ արարչական, նախախնամական եւ փրկչական սրբազնագոյն եւ յաւիտենական ներկայութիւնն ու անճառելի կենսատու ներգործութիւնն իբրեւ մարդու էութեան եւ գոյութեան սկիզբ, ընթացք եւ կատարեալ լրում:

Նարեկը ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է վերծանել թաքնուած այլաբանութիւնը, խորիմաստութիւնները, այսինքն՝ երկրայինը դիտել իբրեւ երկնայինի դուռ, մուտք, բանալի՝ լուծելու համար այն բարդոյթը, որ մարդկային աշխարհի բնոյթն է, հոգու եւ մարմնի միասնութիւնը: Հոգին չի երեւում, սակայն իրական գործող ուժը ինքն է, *էութիւնը հոգին է:* Մշակոյթը, կրօնը, արուեստը հասկանալու համար անհրաժեշտ է խորհրդանշանային համակարգի իմացութիւն, որը միանշանակ չէ եւ բնականաբար մեկնական օրինակների միջեւ պիտի լինեն տարբերութիւններ, սակայն կարեւորը հեղինակի կամ ստեղծագործութեան հիմքում ընկած մի քանի սկզբունքների հասկանալն է, որոնք հունաւորում, կերպարանք են տալիս ստեղծա-

գործութեանը:

Գրիգոր Նարեկացին ՂԳ Խօսքի մէջ համանմանութեան (անալոգիա) եղանակով ի յայտ է բերում մարդու վրայ Աստուածային Հոգու ներգործման զօրութիւնը՝ օրինակ ունենալով ակնյայտ փաստերն ու երեւոյթները: Անտեսանելիի մասին նա մեզ պատկերացում է տալիս տեսանելիի միջոցով՝ համանմանեցնելով այդ երկու մակարդակները միմեանց, որովհետեւ Անտեսանելիի (էութեան) մասին մենք կարող ենք գաղափար կազմել տեսանելիի (երեւոյթի) միջոցով: Այս եղանակից Ս. Գրիգորը օգտւում է հրաշալիօրէն, եւ նրա հաղորդած գիտելիքը ընկալում ենք խորին համոզմունքով՝ իբրեւ հաղորդում, բացայայտում, թաքուցեալ իրականութեան ցուցանում: Ցուցադրումը, պատկերումը, առարկայի միջոցով գաղափարի արտապատկերումը **հանճարների** մենաշնորհն է, եւ այն Նարեկացու ոգու զօրութեամբ ի յայտ է եկել աներեւակայելի չափերով: **Սուրբ Հոգու երեսները շրջում է եւ մենք տեսնում ենք մարդու իսկական բնոյթը, նրա էութիւնը**: Համանմանութիւնը բացայայտում է կապը խորհրդանիշի եւ խորհրդի, երկնայինի եւ երկրայինի, գաղափարի եւ առարկայի, Աստծոյ եւ մարդու, հոգու եւ մարմնի: Խորհրդանշանը ծնունդ է առնում աննիւթականը տեսանելի եւ ըմբռնելի դարձնելու պահանջից: Միտքը զգայականից բարձրանում է հոգեւոր պատկերացումների ոլորտ: Խորհրդակիր առարկան «կարդալ»ու համար՝ միտքը իրաստոյգից անցում է կատարում դէպի վերացականը:

Իրականութեան եւ ստեղծագործութեան (Նարեկի) խորհրդանշանային բնոյթը բարդացնում է դրանց միանշանակ ընկալումը եւ գոյանում են բազմակի ու բազմապիսի տեսութիւններ: Այդ տեսութիւնները հիմնականում վերլուծական բնոյթ ունեն եւ ի զօրու չեն սպառելու խորհրդակիր առարկայի եւ ստեղծագործութեան բովանդակութիւնը: Մեզ համար այս պարագային, սակայն, կարեւորը իմացական սկզբունքի իմաստն է: Երկրայինը երկնայինի նշանային համակարգ է կամ անալոգ: Երկրայինն էլ երկնային է՝ երբ փոխւում է դիտակէտը կամ հոգեւոր դիրքորոշումը: Խորհրդանիշ կարող է լինել ցանկացած առարկայ, իրողութիւն ու երեւոյթ, եթէ կապ է հաստատւում երեւոյթի եւ էութեան միջեւ: Ստեղծագործական բռնկումների պահին մարդ ի վիճակի է հասնելու պայծառատեսութեան եւ նշանների միջոցով՝ օրիգինալի կամ էականի իմացութեան: Խորհրդակիր առարկաների իմաստը հասկանալու համար պետք է փակենք մարմնական աչքերը եւ բացենք **հոգու աչքը**: Այս իմաստով՝ Բացարձակը կամ Աստծուն կարելի է պատկերացնել իբրեւ **մշտաբաց եւ ամէնատես Աչք:** Հետաքրքրական է այս իմաստով Նարեկի ՁԵ Բանի սկիզբը. *«Եւ արդ, որովհետեւ արթնական մեր զուարթութիւնը նինջ ես համարում, իսկ ի Քեզ ուղիղ հաւատքի թմրական խորին լռութիւնը՝ աչքերի անթարթափ բացութիւն»* Բան ՁԵ, 1-5:

Համանմանութեան եւ համեմատութեան կիրառման բազմաթիւ այլ օրինակներ է տալիս (տե՛ս ԾԴ,ա, ՂԵ Բանի հետագա մասերը): Նմանապէս, լուսաբանական օրինակներ է առնում Սուրբ Գրքից: Նարեկացին յաճախ է դիմում **պատմամշակութային փաստարկման** եղանակին՝ օգտագործելով Սուրբ Գիրքը՝ իբրեւ անխաբելի ճշմարտութիւն, անառարկելի հեղինակութիւն:

Նարեկացու ապացուցական համակարգի մէջ իմաստասիրական կամ տրամաբանական վերացական դատողութիւն-մտահանգումներ գրեթէ չկան, այսինքն՝ *Նարեկացին չի փիլիսոփայում, այլ ցոյց է տալիս,* կերպաւորում է լուսաբանուող դրոյթը,

կամ յղում է անում հեղինակաւոր աղբիւրի, կամ համանմանութիւն է կիրառում, օրինակներ է վերցնում, կամ դիմում է հոգեբացայայտական այլ եղանակների, որ կարելի է անուանել **լուսաբանական աղօթք:** Կան պարզօրէն աղերս-աղօթքներ, մաղթանքներ եւ կան Մատեանի մէջ աղօթք լուսաբանումներ, որտեղ Սուրբը կարծես հիմնաւորում է իր խնդրանքը, պատճառաբանում, իմաստաւորում: Սրանով Մատեանը դադարում է պարզ աղօթագիրք լինելուց, և հանդէս է գալիս իբրեւ իրականութեան իսկութեան բացայայտում, իմաստագիտութիւն, խորհրդաբանութիւն եւ աստուածաբանութիւն: Միայն ՂԳ խօսքի մէջ աւելի քան հարիւր անգամ կիրառում է համեմատութեան եղանակը: Հարիւրաւոր օրինակներ է քաղել Սուրբ Գրքերից, տասնեակ խորհրդակիր առարկաներ եւ իրողութիւններ է մեկնել եւ լուսաբանել: Նրա քաղած օրինակները իւրակերպ արտայայտութիւն եւ իմաստ են ստանում Նարեկի մէջ:

Բացի Սուրբգրական իմաստութիւնները բացայայտող օրինակներից՝ Նարեկացին ինքն է ստեղծում նոր խորհրդապատկերներ: Նշեցինք, որ Նարեկի մէջ կան մեկնողական բնոյթի բազմաթիւ մտքեր, հատուածներ եւ ամբողջական գլուխներ: Մեկնել բառացի նշանակում է միասնական հայացքով ընդգրկել տեսանելին եւ անտեսանելին, վերացականն ու թանձրացականը, մարմինն ու հոգին: Մեկնելու համար անհրաժեշտ է **խորհուրդին համապատասխան խորհրդակիր առարկայ** կամ իրողութիւն: Վերջիններս ունեն երկակի կիրառութիւն՝ գործնական եւ խորհրդանշական: Խորհրդանիշ առարկան Խորհրդի համակարգում կորցնում է իր գործնական կիրառութիւնը: Օրինակ, դեռեւս «Երգ երգոց»ի մեկնաբանութեան մէջ Նարեկացին տղամարդու եւ կնոջ սիրային կապը դիտում է իբրեւ Քրիստոսի եւ Եկեղեցու խորհուրդը ներկայացնող բանալի:

Վազգէն Ա Կաթողիկոսը Ս. Պատարագի խորհուրդը մեկնաբանող իր երկի մէջ գրում է. *«Եկեղեցուց ներս ամէն ինչ խորհուրդ է, սիմուոլ է, ո՛չ քարն է քար, ո՛չ փայտը՝ փայտ, ո՛չ աղօթքը լոկ խօսք, ո՛չ երաժշտութիւնը՝ պարզ երգ, ո՛չ էլ Պատարագի հացն ու գինին՝ հաց ու գինի:*

Ով որ չի կարող նիւթական իրականութիւնից այն կողմ անցնել եւ դրա խորհուրդը տեսնել, նրա համար բնական է, որ հացը մնում է հաց եւ գինին՝ գինի: Եւ, սակայն, մարդկային հոգեկան կեանքին յատուկ երեւոյթ է նիւթականից աննիւթական իրականութեան բարձրանալը, երեւոյթ, որ յատուկ է, մանաւանդ, մարդկային մտաւոր եւ հոգեւոր աշխարհին:

Ճշմարիտ հաւատացեալը, ուրեմն, այդ հացն *ու* գինին *ընդունում է որպէս խորհուրդներ, որոնք իր համար դառնում են մարմին եւ արիւն, որոնք զոհ են մատուցւում մեղքերի թողութեան եւ հոգիների փրկութեան համար»:*

Խորհրդաւոր իրողութիւնները բազմաթիւ են եւ հոգեւոր տեքստերը հասկանալու համար պահանջւում է դրանց զոնէ մօտաւոր իմացութիւնը:

Ամենագաղտնի խորհուրդները, ասենք Միւռոնի էութիւնը Նարեկացին լուսաստուերային մատչելիութեամբ ցուցադրում է՝ դիմելով բազմահնար միջոցների: Նախ, Նարեկացին լուսաբանում է Միւռոնի՝ օծման իւղի հիմքում ընկած ձէթի բնական բազմաթիւ յատկութիւններ՝ նրա օգտագործման պատմական օրինակներով: Այնուհետեւ անցնում է Միւռոնի բուն խորհրդի լուսաբանմանը:

Բացի միւռոնից, խորհրդակիր իրողութիւն է **Լոյսը, Հոգու անստուեր լոյսը, որ** Տիրոջ իմաստութիւնն է եւ հանճարը, որոնցով արարուել եւ պահպանւում է աշխարհը:

Նարեկացին կարեւորում է Տիրոջ էութեան նոյնականութիւնը լոյսին. ***«Լոյս ես Դու բարի, ծագում գովելի...»*** *(ՂԳ, 4)*: ***«Նախապարգեւիչն ես մեծախորհուրդ եւ հրաշազարդ օծման շնորհի, որով Քո լոյսն է մեզ հասնում, ճառագա՛յթ անհաս, ծագումն անսահման, արեգակն անաչառասփիւռ, աստղ՝ սահմանիչ երկկշիռ տարրերի, ճրագ ոտքերի եւ լոյս հետքերի*** /ուշադրութի՛ւն-լոյս հետքերի, լուսաւոր հետքեր/: ***Այս լոյսի շնորհիւ տեսանելով իմաստն օծման խորհրդի եւ երկնելով այս ճառը՝ հրեշտակային յստակամիտ պարերգութեամբ ենք տօնում ու փրկչավայել կնդրուկով եւ անբիծ դաւանանքի զուարթարար իւղով ենք խնկարկում Ամենիմաստունիդ պարգեւատու առատաբաշխութիւնը*** (ՂԳ,19-26): Այդ նոյն լոյսի շնորհիւ է տեսել Նարեկացին իմաստն օծման խորհրդի եւ երկնել իր ճառը, ինչպէս եւ ամբողջ Նարեկը:

Խորհրդաւոր իրողութիւններ են նաեւ **պատարագը**, **իմացութեան ծառի ազգակից պտուղը** (Քրիստոսը), **մահափայտը**, որ յետոյ պիտի **խաչ** դառնայ, ***շնչատու արիւնը, զուարթարար ճարպը, ապագայի վկայութեանց խորանի վէմը, խնկարկումը, ձեռնադրումը, Գառն Աստուծոյ, Սուրբ Եկեղեցին իբրեւ Անբիծ Հարս. իւղեփեցական գինի, զմուռս, կնդրուկ, իւղազանգուած անուշ փոշիներ, (առաքինութեան եւ վարքի մաքուր ձեւերը), Զաքարիայի ճրագակիր աշտանակը, Տաճարի խորանի առջեւ մատուցուող բաղարջ հացերը պահքի, իւղախառն նաշիհները, իւղազօծ զուարակները, արիւնի մէջ թաթախուած հաւքերը (իւղի խորհրդի յստակ օրինակներ), Քրիստոսը պատարագեալ, ցորեն հացը եւ խաղողի հիւթը իբրեւ Տիրոջ մարմին եւ արիւն...***

«Նիւթեղէն այս զանգուածը պատկերն է պանծալի երկնի Արարչիդ, քանզի ովքեր օգտուեցին այս իւղից, Քո ողորմութեան շնորհը շահեցին: Քանզի մարդեղութեան խորհրդի համապատասխան որպէս զուարթարար իւղ իջար եւ նկարագիրդ ներդրեցիր մեր էութեան մէջ»: Ուստի այս իւղը դիտւում է իբրեւ Տիրոջը մատուցելի զօրութիւն եւ յոյժ պատշաճօրէն Աստծուն է նուիրւում:

Հին եւ Նոր Կտակարաններից բազմաթիւ յղում-յիշատակումներով Նարեկացին ցոյց է տալիս միւռոնի, կամ օծման իւղի կիրառութեան բազմաթիւ նշանաւոր օրինակներ, առանց որի որեւէ նշանակալից մեծութիւն երկրի վրայ չէր կարող լինել: Միւռոնի զօրութիւնն իսկապէս կարելի է իմանալ Քրիստոսի միջոցով.*»Քեզնո՛վ կարող ենք իմանալ, որ այս իւղն այն զօրութիւնն է, որը փարատում է մեղքի ծառից ծնած տրտմութիւնը եւ կատարելապէս զուարթացնում, ըստ Սաղմոսողի, որ այս ճարպի պարարմամբ ենք մոռանում կերակուրը մահուան, որ օծումն ի՞նչ է, եթէ ոչ մոխրացնող տխրութիւնը յարատեւ խնդութեան փոխարկող շնորհ, որ անուամբդ փրկուելով՝ «զօրութեան Հոգովդ» Հօրն ենք որդեգրւում, եւ ի՞նչ կարող է նշանակել Մարգարէի՝ ծերութիւնը ձէթով պարուրելու եւ օծութեամբ գլուխը վերամբարձելու հոգեւոր ամենատենչալի բաղձանքը, եթէ ոչ այս կենսատու դեղով՝ հին խարդախողի պատճառած կործանիչ մահուան սաստկագոյն սուգի ամոքում, որով եւ հոգենորոգում ես եւ Քեզնով պատսպարում»*: Այս իւղով տպաւորուելուց յետոյ են միայն դառնում քրիստոնեայ, քանզի նրա մէջ Աստուած ներ է դրել Իր զօրութիւնը: Սակայն իւղն իր զօրութիւնն ստանում է, երբ տեառնագրւում է տէրունական կենսատու խաչով.*»Օրհնալոյս եւ զարմանահրաշ այս իւղը հրէային եւ խուժին, Հնդիկին ու բարբա-*

րոսին, սկիւթացուն եւ հելէնին, դժնէաբարոյ դուժին եւ սոսկավիթխարի եւ զարհուրատես շանագլխին, ազատ տիրոջն ու ծառայածին ստրուկին քրիստոնեայ արարելով՝ Քո անունով է կնքում, Սուրբ Հոգուն է ընծայում՝ երկնաւոր Հօրդ հարազատ որդին դարձնելով»:

Միւռոնի խորհուրդը մեզ համար ոչ լիովին է պարզ, ինչպէս եւ մնացեալ խորհուրդները: Նոյնիսկ Նարեկացին Միւռոնի խորհուրդը այդքան հրաշալիօրէն մեկնաբանելուց յետոյ իսկ իրեն բնաւ չի համարել գիտակ այդ խորհրդի: Ընդհակառակը, **Միւռոնի սրբալոյս իւղը** համարել է ըմբռնումի համար անհաս զօրութիւն.» *Եւ քանզի* ***ըմբռնումին անհաս զօրութիւնն այս մեծ մտքի թեթեւաթեւ, արագ սլացմամբ, մտատեսութեան սահմաններից անդին, անհուն ճամփեքի անհետ փախուստով ի սպառ հեռացած դէպ անեզրութիւն փակուեց ինձանից, ո՛չ օրինակուեց կցորդով, ո՛չ նմանուեց զուգամասնութեամբ, ո՛չ սահմանուեց բանաձեւումով, ո՛չ համեմատուեց նմանութեամբ, այլ միայն աստուածային Խաչանշանիդ եւ Փրկչիդ արեանը հաւասար եղաւ»*** (ՂԳ, 515-521):

Եթէ Նարեկացին անբացայայտ է համարում իր համար Միւռոնի խորհուրդը, ապա ո՞վ կարող է մարդկանցից հպարտանալ իր իմացութեամբ: *«Ո՞ր մարդը կարող է իմանալ Աստծոյ խորհուրդները, եւ կամ ո՞վ կարող է խելամուտ լինել, թէ ինչ է կամենում Տէրը: Քանզի մահկանացուների մտածումները անստոյգ են, իսկ մեր գիտելիքները՝ անհաստատ: Եղծանելի մարմինը ծանրացնում է հոգին եւ հողեղէն այս յարկը բազմահոգ է դարձնում միտքը: Ուստի մենք հազիւ ենք նկատում երկրային բաները եւ չարչարանքով ենք գտնում այն, ինչ ընկած է մեր ոտքերի մօտ, իսկ այն, ինչ գտնուում է երկնքում, ո՞վ կարող է քննել եւ ո՞վ կարող է գիտենալ Քո խորհուրդները, եթէ Դու իմաստութիւն չտաս եւ Քո Սուրբ Հոգին չառաքես Քո բարձունքներից: Այսպէս է, որ երկրայինները ուղղեցին իրենց շաւիղները, սովորեցին այն, ինչ հաճելի է Քեզ, եւ փրկուեցին Քո իմաստութեամբ»./*Իմաստ., ԺԹ 13-18/:

Նոյնիսկ յայտնութիւնից յետոյ խորհուրդների իմաստը մեզ համար մնում է ոչ լիովին հասկանալի: Խորհրդի տեղեկատուական լուսաբանումը եւ գիտելիքի վերածելու ընթացքը կարող է սկիզբ ունենալ, բայց վերջ չունենալ: Եւ դա նշում է Նարեկացին «Միւռոնի սրբալոյս իւղի մասին» Բանի մէջ:

Եւ այստեղ անհրաժեշտ է իմացութեան աստիճանների հետեւեալ տարբերակումը: Մեզ յայտնի աստուածային խորհուրդները թէպէտ անհասանելի են ***ըստ էութեան***, *սակայն յայտնութիւնից յետոյ անհասանելի չեն* ***ըստ գոյութեան***: Այսինքն՝ գիտենք, որ կան այդպիսի խորհուրդներ, այնպէս, ինչպէս բնութեան մէջ էլ կան բազմազան երեւոյթներ, որոնք երեւութապէս անյայտ են, սակայն մենք չենք կասկածում դրանց գոյութեանը, թէեւ չենք կարող ասել, թէ ինչ են: Այդպէս էլ Աստուածային եւ հոգեւոր կեանքի խորհուրդները: Օրինակը՝ Սուրբ Երրորդութեան գերբնական խորհուրդն է. հաւատով գիտենք, որ Երեք Անձեր են Մէկ բնութեամբ, միեւնոյն էութեամբ, սակայն մեզ համար անհասկանալի է, թէ ինչպէս կարող է դա լինել: Նոյնն էլ վերաբերում է Քրիստոսի մարդացմանը: Այս խորհուրդները մարդկային երեւակայութիւնից դուրս են եւ դրանք ընդունուում են հաւատքով: Սուրբ Երրորդութեան խորհրդի Նարեկացիական մեկնութիւնն առկայ է ԼԴ ԲԱՆի մէջ, որով նա ընդարձակում եւ խորացնում է այդ խորհրդի մարդկային պատկերացումը

Մեր չիմացութեան պատճառը հաւատքի եւ դաւանանքի (նշանային համակարգի

բանալի գաղափարների) բացակայութիւնն է, որից գոյանում է այնպիսի իրավիճակ, որը վերջին հաշուով պատճառ է մարդուն դառնալու իր իսկ ստորակարգ կրքերի գերին, եւ որոնք էլ լինելով կոյր՝ իրենց հերթին պատճառ են դառնում մարդկային մեղքերի համար, եւ չի բացւում մեր հոգու աչքը, եւ մենք խարխափում ենք խաւարում: Այդ իսկ պատճառով Տէրը ո՛չ թէ արեգակնային պայծառութեան ջահ է վառել մեր՝ ընկածներիս հոգիներում, այլ մեզ տուել է ձէթը, իբրեւ լոյսի փոքրիկ աղբիւր՝ կողմնորոշուելու համար մթութեան մէջ: Բարձունքներից ընկած մարդը ***«...անկարող է իսկապէս տեսնել Անհասիդ գերակայ ու անմերձանելի երկնային լոյսը, այդ իսկ պատճառաւ ոչ թէ մշտափայլ եւ անաղօտելի վառման այդ լոյսով նրան ողողեցիր, այլ գիշերային զարհուրելի սայթաքուն մթութեան մէջ՝ որպէս օգնութիւն տուեցիր ձէթը եւ դրա մէջ թաթախուած պատրոյգն էլ հիւսեցիր մարդասիրաբար, իբրեւ օրինակն անախտ միութեամբ մեզ հետ համախառնումիդ»*** (Բան ՂԳ, 53-59): Ապագայի անորոշութիւնը, անգիտութիւնը՝ թէ ինչ դատաստան է մեզ սպասում, մեր հոգին լցնում է տրտմութեամբ, անհանգստութեամբ եւ խռովքով: Ովքեր բախտաւոր են հաւատքով, նրանք հառաչալից աղօթքով օգնութեան են դիմում Աստծուն:

Նարեկացին այս ամենը յաղթահարել է, **որովհետեւ նրա հանճարը առողջ է, լաւատեսական**, ոգեշնչման աստուածային աղբիւրներից անընդհատ սնունդ ընդունող: Միանգամայն համոզիչ է **Գարեգին Եպիսկոպոս Տրապիզոնիի** խօսքը. «*Նարեկացին, հակառակ բոլոր երեւոյթներուն, անսահմանօրէն* ***լաւատես*** *հոգի մըն է, շնորհիւ իր ամենախորունկ եւ կենդանի հաւատքին՝ Աստուծոյ* ***ողորմութեան*** *վրայ: Եթէ գոյութիւն ունի մեղքը, կայ նաեւ Քաւիչը: Եւ առաջինն աւելի զօրաւոր չէ, քան վերջինը: Ուստի,* ***յուսահատութիւն*** *վերագրել Նարեկացիին՝ կը նշանակէ չճանչնալ անոր հոգին*»: Այլազգիներից ոմանք, ովքեր ապրել են Նարեկացու ապրածի մի չնչին մասը՝ ինքնասպանութիւն են գործել, ինչպէս, օրինակ, *«Մեռը եւ բնաւորութիւնը»* գրքի հեղինակ հոգեվերլուծաբան *Օտտո Վեյնինգերը*: Այդպէս է պատահել, որովհետեւ նրա

յայտնագործած մեղքի ու չարակեցութեան ահռելիութիւնը, որ նա կապում է իր ազգային-գենետիկ հոգեբանութեան հետ, դրական հակակշիռ չի ունեցել, որպիսին հոգեպնդիչ, պայծառալոյս, ճշմարիտ հաւատքն է եւ դրանից բխող լաւատեսութիւնը, որ բնորոշ է Նարեկացուն եւ քրիստոնէութեանն առհասարակ:

Խորհրդաւոր է հոգին, երկինքը, մարդը: Աշխարհում ինչ որ կայ, իր ներքին իմաստն ու խորհուրդն ունի, իր ներքին էութիւնը: Խորհրդաւորն Աստուածայինն է, համագոյի կապն Աստուծոյ հետ: **Հոգին է խորհուրդների խորհուրդը, խորհող խորհուրդը կամ խորհուրդների եւ աշխարհի արարչական սկիզբը:** Հոգին մենք ի զօրու չենք ո՛չ անձնաւորելու, ո՛չ էլ առարկայացնելու, այլ միայն համանմանութեան կարգաւ կամ անալոգիայով պատկերելու եւ պատկերացում կազմելու նրա մասին: Հոգին հոգով է ճանաչւում եւ ոչ թէ իմացութեան տրամաբանական ձեւերով, դատողութեամբ կամ մտահանգումով, ցոյց տալով կամ բացատրելով: Հոգին երբեւիցէ ոչ ոք չի տեսել, ոչ էլ շօշափել, կողքով անցել եւ որեւէ առնչութիւն ունեցել: Եթէ հոգուն առնչուող դատողութիւններ կարելի է ընդունել, ապա միայն ժխտական, բացասական բնոյթի. այսինքն մենք կարող ենք ասել, թէ ինչ չէ հոգին, բայց անկարելի է ասել, թէ ինչ է այն: Նշանակում է՝ հոգին անսահմանելի է, մտքով անըմբռնելի եւ այն միայն հա-



ւատքով է ընդունւում: Նոյնն է Աստծուած եւ Սուրբ Հոգի: Անկասկածելի է այն իրողութիւնը, որ Աստուած իմացել է Իրեն ճանաչելու մեր մարդկային անկարողութիւնը, Ինքն է մարմնացել, մարդացել եւ ծնուել կատարելապէս Սուրբ Կոյսից եւ Սուրբ Հոգով: Սուրբ Հոգով էլ մարմին է առել, հոգի եւ միտք եւ այն ամենը, ինչ յատուկ է մարդուն իսկապէս եւ ոչ թուացողութեամբ: Տեսնելով մարդու չարչարանքը, նրա զրաջանութիւնն Իրեն հասնելու՝ մարդասիրութիւնն Աստծուն դրդել է իջնել մարդկանց մօտ որպէս մարդ, նրանց հետ շփուել, ապրել եւ ուսուցանել, հաղորդել Աստուածային վարդապետութիւնը: Աստուածաշունչը Սուրբ Վարդապետարան է, իմացութեան, խորհրդագիտութեան կատարեալ եւ բարձրագոյն ձեւ: Աստուած աւերել է դժոխքը, զգետնել մարդու գլխաւոր թշնամուն: Միաժամանակ Աստուած թողել է մարդու ազատ կամքը, նրա ընտրելու հնարաւորութիւնը, բարոյական էակ լինելու մարդու բացառիկութիւնն ու նրա անձնական պատասխանատուութեան շնորհը: Այս ամենն անսահման հնարաւորութիւններ են կատարելագործուելու, ճշմարիտ հաւատքի մէջ խորանալու եւ աստիճանաբար իրեն նախապատրաստելու Աստուածային փրկագործութեանը: Որովհետեւ մարդն ազատածին, ինքնիշխան էակ է եւ պատասխանատու է Աստծոյ առջեւ իր երկրային կենսակերպի, վարքի գործունէութեան համար: Մարդն ազատ է իր վարուեցողութեան մէջ, սակայն ընտրութիւնն անհրաժեշտ է կատարել համաձայն Աստուածային պատուիրանների եւ Սուրբ Գրքերում հաղորդած բարոյակարգի: Այսինքն՝ մարդն ազատ է, բայց ինքնագլուխ չէ, քանզի նա մարմնաւոր է, կաւեղէն եւ ենթակայ սխալների, տառապանքի ու մեղքերի, հիւանդութեանց եւ

յանցանքների: Մարդուն տրուած է ե՛ւ հոգի, ե՛ւ մարմին, ե՛ւ միայն Աստծուն իմանալի կերպով են այս երկուսն իրար ազուցուած, Աստուածային գերիմաստութեամբ եւ հանճարով, որ մենք կարող ենք միայն հրաշագործութիւն անուանել: Սակայն մարդը նախատրուածութիւն է, կարողականութիւն է (պոտենցիա) եւ ոչ թէ կատարելութիւն: Մարդկային կեանքը լինելիութեան, կատարելագործման ընթացք է: Մարդն ի՛նքն է իրեն կատարեալ դարձնում Աստուածային ողորմածութեամբ, **հաւատքի** եւ բազմաթիւ այլ շնորհների միջոցով: Ինքը՝ մարդ սեփական ոչինչ ունի, քանզի ինքն էլ Աստծունն է, նրա արարմունքի արդիւնքը: Մարդու Տէրն Աստուած է, սակայն ճանաչելով ինքն իրեն եւ հաւատալով Աստծուն՝ մարդ շատ բանի է տիրանում, կարող է նոյնիսկ դառնալ Աստուծոյ ժառանգորդ, սակայն ոչ նիւթեղէն իմաստով: Մենք չենք տեսել մեր մարդեղութիւնը, արարման ընթացքին ներկայ չենք եղել եւ անգամ պատկերացնել չենք կարող, եւ այս ամենը, Աստուած եւ իր ստեղծածն ընդունում ենք Սուրբ Հաւատքով:

Հաւատքի զօրութիւնը պայմանաւորուած է սրբութեան աստիճանով եւ լինում է Սիրոյ եւ Յոյսի եռամիասնութեամբ: Եւ Սուրբ Գրքում Աստուածային շնորհների մէջ շատ բարձր է գնահատւում սէրը. *«Եթէ խօսեմ մարդկանց լեզուները եւ հրեշտակներինը, բայց սէր չունենամ, կը նմանուեմ մի պղնձի, որ հնչում է. կամ ծնծղաների, որ դողանջում են: Եւ եթէ մարգարէութիւն անելու շնորհ ունենամ եւ հասկանամ բոլոր խորհուրդներն ու ամբողջ գիտութիւնը, եւ եթէ ունենամ ամբողջ հաւատը՝ մինչեւ իսկ լեռները տեղափոխելու չափ, բայց սէր չունենամ, ոչինչ եմ: Եւ եթէ իմ ամբողջ ունեցուածքը տամ աղքատներին եւ իմ այս մարմինը մատնեմ այրուելու, բայց սէր չունենամ, ոչ մի օգուտ չեմ ունենայ... Սերը երբէք չի անհետանում. թէ մարգարէութիւններ են, պիտի չքանան. թէ լեզուներ՝ պիտի լռեն. թէ գիտութիւն՝ պիտի անցնի. քանզի շատից քիչը գիտենք եւ շատից քիչն ենք մարգարէանում: Իսկ երբ գայ կատարեալը, շատից քիչը կ'անհետանայ... Արդ, մնում են հաւատ, յոյս, սէր. սրանք՝ երեքը. եւ սրանցից մեծագոյնը սէրն է:* (Ա Կորնթ. ԺԳ, 1-3, 8-10, 13):

Սակայն այս անգամ մեր ուշադրութեան առարկան **հաւատն է,** որը կապ չունի տեսնելու հետ: Շատերը տեսան, բայց չհաւատացին, այսինքն, տեսնելով՝ չտեսան, շատերն էլ առանց տեսնելու հաւատացին: Աստուած Ինքն է բացւում եւ բացայայտւում մարդուն: Երբեմն երազում, խոր քնի մէջ է ի յայտ գալիս, կամ արթմնի ժամանակ, այնպիսի վիճակի, ինչպիսին Նարեկացին է ասում.»*Իսկ արդ, վասնզի արթնականն մեր զուարթութիւն Քեզ ննջումն իմն է համարեալ, իսկ ի խոր թմրութիւն լռելն վասն ուղիղ հաւատոյն ի Քեզ՝ անթարթափ բացութիւն աչաց*» (Բան ՁԵ, 1-2): Ամեն պարագայի մարդ պիտի վերացած լինի աշխարային վիճակներից: Մեր գիտակցական վիճակների տարբեր ձեւեր եւ մակարդակներ կան՝ առօրեական «միջին» վիճակից մինչեւ համակուածութիւնն ու հափշտակուածութիւնը որեւէ գաղափարով, առարկայով, անձով, երբ մենք ներքին մարդն ենք ընկալում: Ինչպէս որ կան խորհուրդներ, այնպէս էլ կան խորհրդաւոր պահեր ու վիճակներ, որոնք մեր մէջ կարող ենք ընկալել, երբ հոգին արթնութեան մէջ է, բայց միտքը՝ քնած եւ բառերով, խօսքով, ինչպէս նշել ենք վերը, չենք կարող բանաձեւել, քանզի դրանք մաքուր պատկերներ են, մաքուր մտքեր իրենց անառարկայական, անբանաձեւ վիճակում: Ովքեր կարողանում են իրենց այդ վիճակները հաղորդելի դարձնել՝ նրանց անուանում են **հան-**

ճար: **Հանճարեղութիւնը երկնայինը երկրայինի, խորհուրդը՝ խօսքի միջոցով արտայայտելն է,** երկնայինի անալոգ, համանման բան գտնելը եւ համանմանութեամբ ըմբռնելի դարձնելը: **Անալոգը** կամ համանմանակը մեկնում, մատչելի է դարձնում խորհուրդը եւ այդ պարագային պիտի մեկնուի թաքնուած իմաստը, այսինքն՝ լուսաբանուի: Նարեկացին Նարեկի մէջ մարդու հայեացքը բարձրացրել է Աստուծոյ, Միւռոնի, Խաչի, Սուրբ Երրորդութեան, Կոյս Աստուածածնի, Առաքեալների վրայ եւ մեկնել այլ խորհուրդներ, ինչպէս ասենք «Մեղայ» բառի խորհուրդը ԻԷ բանի մէջ:

Ժ ԲԱՆի մէջ Նարեկացին բացայայտել է հաւատի զօրութեան գաղտնիքը, նրա «անատոմիան», որն այնքան որոշակի եւ յայտնատեսութեամբ ոչ ոք է տուել:

Հաւատքի մասին խօսել են գուցէ բոլոր քրիստոնեայ գրիչները, հեղինակները եւ կարեւոր եւ ուշագրաւ մտքեր են արտայայտել, սակայն Նարեկի մէջ գտանք հաւատքի իմացաբանական դերակատարութեան յստակ բնորոշումները, թէ այն մարդուն ինչ է տալիս իրականութիւնը ճանաչելու իմաստով:

Բան Ժ *«Ամեն ինչ հնարաւոր է նրա համար, ով կը հաւատայ»:* Եթէ ընտրեալների Աստծուն հաճելի բարեմասնութիւնների չափը քննենք այստեղ՝ հաւատքը պիտի գտնենք առաջին գահերեց պայման, որով կարելի է միայն մուտքը սրբութեանց, առանց որի փառքի Տէրն անգամ Իր հրաշագործ զօրութիւնը մեզ ցոյց տալ չհաճեց, այլ իբրեւ լծակից Իր բարերարութեան նախ եւ առաջ պահանջեց հաւատքը մեր, որը որպէս աստուածամերձ զօրութիւն, որ ինքնին բաւարար է կեանք տալու համար, ինչպէս որ օրհնաբանեալ Աստուծոյ բերանը վկայեց. «*Հաւատք Քո կեցուցին զքեզ*»:

Քանզի արդարեւ **յստակ տեսութիւնը եւ կատարեալ իմաստութիւնը, Աստուծոյ հետ ընտանութիւնը եւ Բարձրեալի ճանաչումը** մասերն են, հաւատքի երջանիկ եւ ընտրեալ անուն, որ յարատեւելով մնում է անվթար եւ անխափան, պատուակից լինելով Սիրոյն եւ Յոյսին: Զի եթէ մանանեխի սերմի փոքրիկ հատիկի չափ հաւատքն ի զօրու է մեծամեծ լեռները ծովի յատակը սուզել, ապա յիրաւի կենաց առաջնորդն այս սկզբնաշաւիղ՝ ընդունում ենք իբրեւ աներկմիտ աստուածպաշտութիւն, որ **ապառնի եւ ծածկեալ բաներն առանց երկբայութեան Հոգու աչքով է տեսնում:**

Երրորդութեան փառատրելի անուամբ պատուելի **Հաւատքը Սիրոյն եւ Յոյսին է դասակից**: Քանզի եթէ այս երեք առանձնայատուկ հատոյթները միեւնոյն խորհրդով դիտես՝ յաւէտ **պիտի հարստանաս Աստուծով**՝ նրանց շնորհիւ: Քանզի եթէ Նրան հաւատաս, կը սիրես էլ, որով կը յուսաս էլ Նրա աներեւոյթ պարգեւները: Նրան փառք յաւիտեանս. ամէն»:

Այսիսով Սուրբ Գրիգոր Նարեկացին Մատեանի Ժ ԲԱՆի մէջ լուսաբանում է **Հաւատքի նշանակութիւնը** մարդու գործնական կեանքում եւ իմացութեան մէջ: Հաւա

տացեալը հաւատքի միջոցով ապառնի եւ ծածկեալ բաներն Հոգու աչքերով է տեսնում: Եւ **Հաւատքի մասերն են՝ յստակ տեսութիւնը եւ կատարեալ իմաստութիւնը եւ Աստուծոյ հետ ընտանութիւնը եւ Բարձրեալի ճանաչումը**: Ահա թէ ինչպիսի հրաշք է Հաւատքը, որը դասակից է Յոյսին եւ Սիրոյն: Եթէ մարդ ունի Հաւատքի շնորհը, ապա անհրաժէշտօրէն եւ անպայմանօրէն կ'ունենայ նաեւ Յոյսի եւ Սիրոյ շնորհները, եթէ երեք հատոյթները կամ առանձնակի երեւոյթները միեւնոյն խորհրդով դիտենք, երեքը դիտենք որպէս Մէկի՝ Աստուծոյ պատկանելութիւն, կամ ենթական դիտենք Աստուած, պիտի յաւէտ հարստանանք Աստուծով: Եթէ մէկը ունի այս ե-

րեքը, նա կատարեալ մարդ է: Յիշենք թէ ինչ է ասում Սիրոյ մասին Պօղոս Առաքեալը «Եթէ ամեն ինչ ունենամ եւ սէր չունենամ, ի՞նչ իմաստ պիտի ունենայ իմ ունեցուածքը»: Սէրը դառնում է գոյութեան կատարելութեան չափանիշ: Եթէ հաւատում ես Նրան, պիտի եւ սիրես, քանզի հաւատում ես Աստծուն եւ առանց հաւատքի ինչպէ՞ս պիտի սիրես:

Նարեկացին բացում է հաւատքի խորհրդի բուն էութիւնը: Այն, ինչ իմաստասէրների, հոգեբանների երազանքն է (Յստակ տեսութիւն, կատարեալ իմաստութիւն), այստեղ կատարեալ իրողութիւն է, փաստ է, ձեռք բերած վիճակ: Ուստի քրիստոնեայ մանուկը, ինչպէս Կողբացին է նկատել, աւելի բարձր իմացութեան տէր է, քան յոյն իմաստունները: Թէ յոյները եւ թէ հրէայ մարգարէները իմաստութեան են ձգտել եւ իմաստութեան գովքն են արել, իսկ քրիստոնեաները Տիրոջ շնորհներն են խնդրել: Եւ ահա **կատարեալ իմաստութիւնը** հաւատքի կրողի բաժինն է կամ ժառանգութիւնը: Նաեւ **Յստակ տեսութիւնը**, որը խորը, անմիջական ըմբռնումն է ժամանակների եւ ժամանակները միմեանց կապող անսահմանութեան: Այլ խօսքով՝ եթէ մենք մտահանգումային ճանապարհով մի կերպ ենթադրութիւններ ենք անում եւ հասնում յարաբերական ճշմարտութեան, Նարեկացին այդ ամենը աներկբայ կերպով տեսնում է մտքի յստակ տեսութեամբ, խորհրդատեսական ինտուիցիայով: Յստակ տեսութիւնը վերաբերում է մարգարէութիւններին /ապագայի տեսութեանը/, գաղտնաշխարհի իմացութեանը, պատմութեանը, իմաստասիրութեանը, խորքային հոգեբանութեանը, ներքին մարդուն: Կատարեալ իմաստութիւնը վերաբերում է ոչ միայն խորքային իմացութեանը, այլեւ իմացական իդէալի իրագործմանը

Աստուծոյ հետ ընտանութիւնը եւ **Բարձրեալի ճանաչումը** աւելի գործնական կեանքին են վերաբերում: Եւ այստեղ նմանութիւն կայ Դաւիթ Անյաղթի իմաստասիրութեան սահմանումների հետ՝ տեսականի եւ գործնականի իմաստով. Իմաստասիրութիւնը գիտութիւն է Աստուածային եւ մարդկային իրողութեանց մասին -երկրորդ սահմանում-, իմաստասիրութիւնը գիտութիւն է Աստծուն նմանուելու մասին ըստ մարդկային կարողութեան- չորրորդ սահմանում:

Հաւատքի այս չորս յատկութիւնները կարելի է պատկերացնել **Քրիստոսի Խաչի համանմանութեամբ:** Խաչակենտրոնը հաւատքն է, որը ճառագայթում է չորս ուղղութեամբ. դէպի գլխամաս՝ յստակ տեսութիւն: Դէպի ոտքերը՝ կատարեալ, այսինքն իրագործուած իմաստութիւն: Աւարտուն ընթացքի խորհրդանիշը ոտքերն են, որոնցով մարդ հասնում է Սրբութիւն Սրբոց: Աստուծոյ հետ ընտանութիւնը խորհրդանշում է Խաչի ձախակողմեան թեւը, որտեղ մարդու սիրտն է: Աստծոյ եւ մարդու կապը սրտային, սրտանց, սրտառուչ կապ է: Մտերմութեան աստիճանը սրտով է որոշւում: Բարձրեալի ճանաչողութիւնը կարելի է խորհրդանշել Աջ Ձեռքով, որի սեղմումով մարդիկ իրար ծանօթանում են եւ միմեանց հաղորդում իրենց ինքնութիւնը հաստատող

հոգեւոր հոսանքը: Ձախ Ձեռքն իր վրայ է կրում սրտի ծանրութիւնը եւ համեմատաբար ազատ է աշխատանքից: Մարդ սովորաբար գործում է աջ ձեռքով, նոյնիսկ ուղեղի աջ կիսագունդն է համարւում իմացականութեան կենտրոնը, աջ ձեռքով հոսում, դուրս են գալիս մարդու դրական լիցքերը, երկնքում սրբերը Աստուծոյ աջ կողմն են եւ օժանդակութիւնը, օգնութիւնը մենք համարում ենք **աջակցութիւն** եւ ընդունուած է

համբուրել հոգեւորական մարդկանց Աջը, իբրեւ սրբութեան, բարութեան եւ ճշմարտութեան սիմուոլ:

Մարդու հաւատքի սրբութեան եւ ճշմարտութեան աստիճանով է պայմանաւորուած նրա յոյսն ու լաւատեսութիւնը, հոգու պայծառ վիճակներն ու ոգեշնչուածութիւնը: Նարեկի մէջ մեղքերի նկարագրութեան, թուարկման, բնութագրման, ինքնաձաղկումի երկար համարները կարող են իրօք յուսահատութիւն առաջ բերել, եթէ դրանցից յետոյ չլինէին լաւատեսական համարներ, որոնք, ինչպէս պայծառաշող արեգակը փոթորկից յետոյ, փոխում են մարդու տրամադրութիւնը: Դա պարզ երեւում է Մանասէի օրինակաւ ԾԱ Բանի Դ մասի մէջ, որում ցոյց է տրուած Աստուծոյ աներեւակալելի բարեգթութիւնը, երկայնմտութիւնը: Եթէ Մանասէն իր բոլոր ոճրագործութիւններից, ահաւոր մեղքերից յետոյ ներւում է Աստծուց, մեր մեղքերն էլ Աստուած կը ների: Սա մի յոյս է, մի տրամադրութիւն, որը հնարաւորութիւն է տալիս ենթակային զգաստանալու եւ բռնելու բարեպաշտութեան եւ բարեգործութեան ճանապարհը: Միաժամանակ Աստուած Մանասէին ներում է, որպէսզի, ըստ Նարեկացու իմաստուն մեկնութեան, մարդու յոյսը չմարի, որքան էլ յանցանքներ գործած լինի: Այսինքն, Մանասէն գուցէ մի բացառիկ օրինակ է եւ այն մեզ հիմք պիտի չտայ անհոգ լաւատեսութեան, որ մենք էլ պիտի փրկուենք, ինչ յանցանք էլ գործենք: Եթէ այդպէս լինէր որեւէ կրօնի եւ բարոյակարգի կարիք չէր լինի: Նարեկեան այդ լաւատեսութիւնը շարունակւում է ԾԳ բանի մէջ. «*Դու որ մեզ մարմնակից եւ պատկերակից եղար եւ իբրեւ քահանայապետ անօրինակդ, օրինակի լուծը խորտակելով բարեբանեալ մարմնիդ նուիրումով անմահացար եւ յարատեւ պատարագ ես մատուցւում անասունների զենման /զոհումի/ փոխարէն, աննուազաբար քաւութիւն ես շնորհում ոչ միայն սակաւամեղներին, այլ նաեւ նրանց, որոնց փրկուելու յոյսը կտրուած է: Որովհետեւ ի՞նչ արժէ մարմնի անդամների նոյնիսկ բիւրաւոր տարիների երկարաձգութեամբ մեղքի մէջ ապրած լինելը, երբ ամենքի Աստուածդ սրա համար կամովին եւ յօժարութեամբ զոհուելն յանձն առար եւ մահուանն համբերելով բաշխւում ես իբրեւ քաւութիւն*»:

Նարեկը, յուսահատութեան չի մղում, որովհետեւ կառուցուած է *հակակշռոյթների սկզբունքի* վրայ, մարդու մեղկութեանը, չարութեանը հակակշիռ է աստուածային բարութիւնը: Ամեն Խօսքի մէջ առկայ է ե՛ւ ինքնապարսաւ, ե՛ւ Աստծոյ փառաբանութիւն, որը յուսատու (լուսատու) եւ մաքրագործող հուր է՝ ներթափանց զօրութեամբ, ամենամաքրիչ յատկութեամբ: Մեղքերը խոստովանելով՝ մարդ հնարաւորութիւն է ստանում իբրեւ իսկատիպ քրիստոնեայ՝ ներանձնական հոգեդաշտը դարձնելու մարտադաշտ եւ պայքար մղելու չարութեան դէմ իր իսկ ներաշխարհում: Մատեանի մէջ բնութագրական դրական եւ բացասական խօսքերը միմեանց ամրակցուած են եւ կառոյցը մի ներդաշնակ ամբողջութիւն է, կատարելութեան մի համանուագ, որի արդիւնքը մեղքերի քաւութիւնն է ի վերջոյ, որին ծառայում են զղջումը եւ նրան ներհիւսուած կատարսիսը կամ ազնուացումը բնաւորութեան, խաղաղութիւնը հոգու, մաքրագործումը մարդու, վեհութիւնը նրա գործերի: Հաւատն առ Աստուած թոյլ չի տալիս մարդուն յուսահատել, այլ նրան դուրս է բերում բոլոր դժուարութիւններից, որովհետեւ այն սարեր է շրջում, եւ հարթավայրերից բարձունքներ գոյաւորում: Ճշմարիտ հաւատացեալի համար ամեն ինչ հնարաւոր է: